

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԱՌԻԾԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«14» հունիսի 2013 թ.

գ. Գառնառիճ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գառնառիճի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 48 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Գառնառիճի գյուղական համայնքի ղեկավար Վանիկ Մանուկյանի, Գառնառիճի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մայիսի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել է 2013 թվականի հունիսի 7-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Գառնառիճի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի հունիսի 4-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հուլիսի 9-ի թիվ 4 արտահերթ նիստի քննարկմանը, մշակվել և գործողության մեջ է դրվել միջոցառումների ժամանակացույց՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման ուղղությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: